

ԿԱՐՉԱԿԱՆ ԿԱՐՈՒՅԹԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎՆԵՐՈՒՄ



ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՄԱՌՈՏ

Դիմում / բողոք

Դիմումը պետք է ստորագրված լինի դիմողի կողմից, ներառի դիմողի անունը, ազգանունը, փոստային հասցեն, տրման ամսաթիվը, հստակ սահմանի ներկայացվող պահանջը, պարունակի հիմնավորումներ:

Մուտքագրում ԿԸՀ կամ ԸԸՀ գրանցամատյանում

Ձևական սխալները շտկվում են: Եթե դիմումին կից փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, ապա դիմողին առաջարկվում է ողջամիտ ժամկետում համալրել:

Նախագահը հասցեագրում է հանձնաժողովի անդամի

Հանձնաժողովի մյուս անդամները ստանում են դիմումի պատճենը: Եթե հանձնաժողովի որևէ անդամ վարչական վարույթը մերժելու առաջարկ չի ներկայացնում, ապա վարչական վարույթը համարվում է հարուցված:

Որոշման նախագիծ

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դիմումի վերաբերյալ որոշման նախագիծ ներկայացնելու՝ հարցը հանձնաժողովի նիստում քննելու համար:

Հանձնաժողովի նիստ

Դիմումատուն ծանուցվում է դիմումի քննական օրվա և ժամի մասին: Հանձնաժողովի նիստում դիմումը քննարկվում է ըստ էության: Հանձնաժողովի նիստը համառոտ արձանագրվում է՝ անկախ վարույթի մասնակիցների ներկայությունից:

Վարչական ակտ

Դիմումի քննական արդյունքում կայացվում է որոշում: Վարչական վարույթի հարուցումը մերժելու դեպքում կայացվում է որոշում, որում նշվում են մերժման պատճառները և հիմքերը:

Հրապարակում

ԿԸՀ ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում ԿԸՀ համացանցային կայքում ակտը տեղադրելու պահից, իսկ ԸԸՀ ընդունած վարչական ակտը՝ հանձնաժողովում այն տեսանելի տեղում փակցնելու պահից: Վարույթի մասնակիցները պաշտոնապես ծանուցվում են:

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:



1

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- ♦ անձի դիմումը կամ բողոքը,
- ♦ վարչական մարմնի նախաձեռնությունը:



2

ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ (ԱՅՆ ԱՆՁԻՆՔ ՈՎՔԵՐ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԴԻՄՈՒՄ ԿԱՄ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ)

1. Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկել՝
 - ♦ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը.
 - ♦ ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԸ, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները.
 - ♦ ԴԻՏՈՐԴԸ, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները.
 - ♦ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ, եթե գտնում է, որ ստորադաս հանձնաժողովը կամ հանձնաժողովը, որի անդամն է ինքը, խախտել է իր կամ այլ անձանց՝ ընտրական օրենսգրքով սահմանված որևէ իրավունք:
2. Թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու դիմում կարող է ներկայացնել՝
 - ♦ միայն թեկնածուն:
3. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու դիմում կարող է ներկայացնել՝
 - ♦ միայն ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը),
4. Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրան-



ցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու դեպքում, որոշումը կարող է բողոքարկել՝

- ◆ միայն ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)՝
5. Ընտրությունների արդյունքները բողոքարկելու վերաբերյալ դիմում կարող են ներկայացնել՝
- ◆ միայն թեկնածուն.
 - ◆ կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը):
6. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող են ներկայացնել՝
- ◆ թեկնածուն (մեծամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության արդյունքները)
 - ◆ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը),
 - ◆ վստահված անձը, միայն այն դեպքում եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում,
 - ◆ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, միայն այն դեպքում եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին,
 - ◆ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը:
7. Ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում կարող են ներկայացնել՝
- ◆ թեկնածուն
 - ◆ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը):

3

ԴԻՄՈՒՄ (ԲՈՂՈՔ) ՔՆՆՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. **Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով** կարող են բողոքարկվել՝

- ◆ Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը).
- ◆ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

2. **Կենտրոնական ընտրական հանձնաժողով** կարող են բողոքարկվել՝

- ◆ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ Ազգային ժողովի



մեծամասնական ընտրակարգով պատգամավորի և համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների)։

- Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ սահմանադրական դատարան։
- Համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ վարչական դատարան։

3. ՀՀ վարչական դատարան կարող են բողոքարկվել՝

- ♦ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների)։

4. ՀՀ Սահմանադրական դատարան կարող են բողոքարկվել

- ♦ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները։

4

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԿԵՏՆԵՐ

- ♦ **Քվեարկության օրվան նախորդող օրերի ընթացքում՝**

- **Տեղամասային** ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել **ընտրատարածքային** ընտրական հանձնաժողով **օրացուցային 2 օրվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին։

- ♦ **Քվեարկության օրվա ընթացքում՝**

- **Տեղամասային** ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով **քվեարկության օրը կամ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն։**

- **Ընտրատարածքային** ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները



կարող են ներկայացվել **կենտրոնական** ընտրական հանձնաժողով **օրացուցային 3 օրվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին:

ՀԱՏՈՒԿ ԺԱՄԿԵՏՆԵՐ



1. Ընտրական տեղամասում **քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում** համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել **միայն քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն:**
2. **Ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում** համապատասխան ընտրական հանձնաժողով (ԸԸԿ կամ ԿԸՀ) կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար ընտրական օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետի ավարտից ոչ ուշ, **քան 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:**
3. ա/ Թեկնածուի,
բ/ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի,
գ/ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի **գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում** կարող է ներկայացվել **մինչև քվեարկության օրը:**
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ թեկնածուի գրանցման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել կենտրոնական ընտրական հանձնաժողով 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը:
Այս՝ (3-րդ), կետում նշված ժամկետների ավարտից հետո ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների ընթացքը որոշվում է ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո:
Եթե դիմում(բողոք) տրալու համար սահմանված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

5

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Ընտրություններ նշանակվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ընտրական հանձնաժողովները նախատեսված բողոքներին և դիմումներին պատասխանում, դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են **հնգօրյա ժամկետում**, բայց ոչ ուշ, քան համապատասխանաբար **մինչև քվեարկության նախորդ օրը կամ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը**:



6

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Ստացված բոլոր դիմումները և բողոքները ստացվում և մուտքագրվում են հանձնաժողովի համապատասխան գրանցամատյանում, դրանց տրվում են մուտքի համարներ:



2. ա/ դիմումը պետք է՝

- ◆ ստորագրված լինի դիմողի կամ բողոք բերողի կողմից,
- ◆ ներառի դիմողի (բողոք ներկայացնողի) անունը, ազգանունը, փոստային հասցեն, տրման ամսաթիվը,
- ◆ հստակ սահմանի ներկայացվող պահանջը,
- ◆ պարունակի հիմնավորումներ:

Հնարավոր բոլոր ապացույցները պետք է կցվեն դիմումին կամ բողոքին:

բ/ դիմումը կարող է ներառել նաև դիմումատուի էլեկտրոնային կապի որևէ միջոցի տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն և այլն):

3. Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները չեն քննարկվում:

Նշված դիմումների ուսումնասիրման արդյունքում հանձնաժողովը կայացնում է պատճառաբանված որոշում վարչական վարույթը կարճելու մասին:

4. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա ընտրական հանձնաժողովը հնարավորություն է ընձեռում շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին:

Եթե դիմումին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա ընտրական հանձնաժողովը դիմողին առաջարկում է ողջամիտ ժամկետում համալրել այն: Ժամկետը սահմանվում է այն հաշվով, որպեսզի դիմողը հնարավոր

րություն ունենա վերացնելու թերությունները, իսկ հանձնաժողովն էլ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի պահպանմամբ պատշաճորեն քննի դիմումը (բողոքը):

5. Եթե դիմումը կամ բողոքը ստացվել է՝

ա/ ոչ պատշաճ սուբյեկտի կողմից.

բ/ սահմանված ժամկետների խախտումով.

գ/ այլ ցանկացած թերությունով,

ապա դիմումը կամ բողոքը ստանալու ժամանակ դրանք չեն կարող հիմք հանդիսանալ դիմումը կամ բողոքը չստանալու կամ մատյանում չմուտքագրելու համար: Ցանկացած դեպքում դիմումը պետք է ստացվի ու մուտքագրվի:

6. Հանձնաժողովի նախագահը դիմումը կամ բողոքը մուտքագրվելուց անմիջապես հետո հասցեագրում է հանձնաժողովի անդամին, իսկ պատճենը տրամադրում է հանձնաժողովի մնացած անդամներին:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դիմումի (բողոքի) վերաբերյալ որոշման նախագիծ ներկայացնելու՝ **հարցը հանձնաժողովի նիստում քննարկելու համար:**

Եթե հանձնաժողովի որևէ անդամ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին **որոշման նախագիծ չի ներկայացնում**, ապա վարչական վարույթը համարվում է հարուցված:

Այդ դեպքում հանձնաժողովը իր նիստում պետք է **ըստ էության քննարկի** դիմումը(բողոքը) և կայացնի որոշում:

7. Վարչական վարույթ իրականացնող ընտրական հանձնաժողովի անդամը ինքնաբացարկ հայտնելու իրավունք չունի:

8. Հանձնաժողովի նիստը համառոտ արձանագրվում է՝ անկախ վարույթի մասնակիցների ներկայությունից:

- ◆ Վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին հանձնաժողովը կայացնում է որոշում, որում նշվում են մերժման պատճառներն ու հիմքերը:

- ◆ Դիմումի (բողոքի) քննարկումը տեղի է ունենում հանձնաժողովի նիստում, որի արդյունքում հանձնաժողովը կայացնում է որոշում:

- ◆ Տեղեկատվություն ստանալու մասին դիմումները հանձնաժողովի նիստում չեն քննարկվում: Դրանց պատասխանը ուղարկվում է հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ, պատասխանի օրինակը տրամադրվում է հանձնաժողովի անդամներին:

Եթե պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթի օրինակը ներբեռնելու հնարավորությամբ տեղադրված է ԿԸՀ համացանցային կայքում, ապա դիմումատուին ուղարկվող պատասխանում նշվում է այդ մասին և նրան դրանցից պատճեններ կամ քաղվածքներ չեն տրամադրվում:

Եթե մինչև դիմումի (բողոքի) քննարկումը կամ քննարկման ժամանակ, մինչև հանձնաժողովի կողմից որոշում ընդունելը, դիմողը (բողոք ներկայացնողը) գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից (բողոքից), բացառությամբ վերահաշվարկի դիմումների, հանձնաժողովը որոշում է կայացնում դիմումով (բողոքով) վարչական վարույթը կարճելու մասին:

7 ԴԻՄՈՒՄԻ (ԲՈՂՈՔԻ) ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ



1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովում դիմումի (բողոքի) քննարկման մասին դիմումատուն ծանուցվում է դիմումի (բողոքի) քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովի համացանցային կայքում տեղեկություն տեղադրելու միջոցով:

Եթե դիմումում (բողոքում) նշված է էլեկտրոնային կապի որևէ միջոց՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստային հասցե (այսուհետ՝ էլեկտրոնային կապի միջոց), ապա դիմումատուն (բողոք ներկայացնողը) **տեղեկացվում է նաև** այդ միջոցով:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ (ԲՈՂՈՔԻ) ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«...» 20...թ



Դիմումատու (բողոք ներկայացնող)

.....


Քաղաքացի-ի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված 20...թ. թիվ դիմումի (բողոքի) քննարկումը տեղի կունենա՝ 20...թ.-ի-ին ժամը՝-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում՝ հասցեն Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գ. Քոչարի 21ա:

(Ներկայանալ անձը և(կամ) լիազորությունները հաստատող փաստաթղթերով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի (բողոքի) քննարկման մասին դիմումատուն (բողոք ներկայացնողը) համարվում է ծանուցված դիմումի (բողոքի) քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում տեղեկություն փակցնելու **դեպքում**: Եթե դիմումում (բողոքում) նշված է էլեկտրոնային կապի որևէ միջոց, ապա **նրան միաժամանակ** կապի այդ միջոցով տեղեկացնելու դեպքում:

ԹԻՎ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ (ԲՈՂՈՔԻ) ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ


«...» 20...թ 

Դիմումատու (բողոք ներկայացնող)
.....

Քաղաքացի-ի կողմից Թիվ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված 20...թ. թիվ դիմումի (բողոքի) քննարկումը տեղի կունենա՝ 20....թ.-ի-ին ժամը՝-ին Թիվ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստում՝ հասցեն Հայաստանի Հանրապետություն, քաղաք....., փողոց....., շենք....., հարկ....., սենյակ.....: Թիվ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ

կ. տ.

8 ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ (ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱԳՆՈՂԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Դիմումատուն (բողոք ներկայացնողը) իրավունք ունի՝ 

ա) մասնակցելու հանձնաժողովի նիստում իր դիմումի (բողոքի) քննարկմանը.
բ) ներկայացնելու հիմնավորումներ.
գ) դիմումի (բողոքի) շրջանակներում հարցեր տալ զեկուցողին.
դ) ելույթ ունենալ:

Դիմումատուն (բողոք ներկայացնողը) իրավունք չունի՝
♦ հայտնելու բացարկ հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի

անդամին:

Ընտրությունների ժամանակահատվածում, աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, վարչական վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերին ծանոթանում են վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովում՝ այդ վարույթով հրավիրված նիստից առաջ:

ԿԱՍԵՑՈՒՄ

Ընտրությունների ժամանակահատվածում վարչական վարույթը չի կարող կասեցվել:

9

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Ընտրական հանձնաժողովը կարող է կայացնել վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում, եթե գտնում է, որ ներկայացված բողոքը կամ դիմումը չի համապատասխանում ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի պահանջներին:



Վարչական վարույթի հարուցումը մերժելու հիմքերն են՝

- ♦ եթե դիմումը կամ բողոքը ներկայացվել է նման իրավունք չունեցող անձի կողմից: Այդ անձանց ցանկը նշված է II գլխում:
- ♦ եթե դիմումը (բողոքը) ներկայացվել է սահմանված ժամկետի ավարտից հետո: Այդ ժամկետները նշված են IV գլխում:
- ♦ եթե դիմումը կամ բողոքը հասցեագրվել է ոչ իրավասու ընտրական հանձնաժողովին: Այն ընտրական հանձնաժողովին, որին չի կարող նման դիմում (բողոք) հասցեագրվել (տես III և IV գլուխները):

10

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելուց հետո՝ հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու պահից:



Այդ ակտն համացանցային կայքում տեղադրելուց հետո վարույթի մասնակիցներին ուղարկվում է կարճ հաղորդագրություն վարչական ակտի ընդունման մասին, եթե դիմումում (բողոքում) նշված է էլեկտրոնային կապի որևէ միջոց:

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական

ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելուց հետո՝ հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ակտի օրինակը փակցնելու պահից:

Վարույթի մասնակիցներին ուղարկվում է կարճ հաղորդագրություն վարչական ակտի ընդունման մասին, եթե դիմումում (բողոքում) նշված է էլեկտրոնային կապի որևէ միջոց:

3. Կենտրոնական կամ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վարչական ակտն ընդունելուց հետո՝ **եռօրյա ժամկետում**, ուղարկվում է վարչական վարույթի մասնակիցներին՝ առաքման անդորրագիրը կցելով գործին, եթե այդ ակտը վարույթի մասնակիցները հանձնաժողովում չեն ստացել:

11 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԸ



1. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն **համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն:**

2. Քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացնել՝

- ♦ **թեկնածուն**, *եթե անձամբ ներկա է եղել* ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը,
- ♦ **վստահված անձը**, *եթե անձամբ ներկա է եղել* ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը,
- ♦ **տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը**՝ եթե ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ *հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում:*

Եթե միաժամանակ կայացել է **մի քանի քվեարկություն**, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի **անդամը** վերահաշվարկի դիմում կարող է ներկայացնել միայն այն քվեարկության արդյունքի վերաբերյալ, *որի արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:*

Միաժամանակ **մեկից ավելի** քվեարկություններ անցկացվելու դեպքում **յուրաքանչյուր քվեարկության արդյունքների** վերահաշվարկի համար ներկայացվում է **առանձին դիմում:**

3. Վերահաշվարկի դիմումը պետք է՝

- ◆ ստորագրված լինի դիմողի կողմից,
- ◆ ներառի դիմողի անունը, ազգանունը, փոստային հասցեն,
- ◆ այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ,
- ◆ եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն, ապա պետք է նշվի այն քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ պահանջվում է վերահաշվարկ անցկացնել:

Դիմումին կարող են կցվել քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ:

4. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկի դիմումները գրառում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ նշելով ստացման ժամանակը:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկը կատարվում է ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով:

Դիմումատուի հրաժարվելը քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմումից հիմք չէ վերահաշվարկ չիրականացնելու համար:

Վերահաշվարկների դեպքում դիմումների մերժումը

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի դրույթների խախտումով:

12 ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքով ընդունված որոշման վիճարկման մասին դիմում ՀՀ սահմանադրական դատարան կարող է ներկայացվել ընտրությունների արդյունքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ **5-րդ օրը, մինչև ժամը 18.00-ն:**

2. Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքով ընդունված որոշման վիճարկման մասին դիմում ՀՀ սահմանադրական դատարան կարող է ներկայացվել ընտրությունների արդյուն-



քի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ **5-րդ օրը, մինչև ժամը 18.00-ն:**

3. Ընտրական իրավունքի խախտման դեպքում՝ հայցադիմումը ՀՀ վարչական դատարան կարող է ներկայացվել օրացուցային **3 օրվա ընթացքում այն օրվանից**, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին:

Ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումներ կարող են ներկայացվել **նախընտրական քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև քվեարկության հաջորդ օրը ներառյալ**: Այս դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել օրացուցային **3 օրվա ընթացքում այն օրվանից**, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

4. Ընտրողների ցուցակներում տեղ գտած՝ **դիմողի անձին չվերաբերող** անճշտությունները վերացնելու, ցուցակներում լրացումներ կատարելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ:

5. Ընտրողների ցուցակներում տեղ գտած՝ դիմողի անձին վերաբերող անճշտությունները վերացնելու, դիմողին ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել **պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ցանկացած ժամանակ**:

Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
Տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը)	Յուրաքանչյուր ոմ	Եթե գտնում է, որ խախտվել է կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը	Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	Մինչև քվեարկության օրը՝ օրացույցային 2 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Քվեարկության օրվա ընթացքում՝ քվեարկության օրը կամ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն:
	Վստահված անձը	Եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահողի իրավունքները		
	Դիտորդը	Եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի իրավունքները		
	Ընտրական հանձնաժողովի անդամը	Եթե գտնում է, որ ստորադաս ընտրական հանձնաժողովը կամ հանձնաժողովը, որի անդամն է ինքը խախտել է իր կամ այլ անձանց որևէ ընտրական իրավունք		
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը)	Յուրաքանչյուր ոմ	Եթե գտնում է, որ խախտվել է կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	Օրացույցային 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին:

Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
	Վստահված անձը	Եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի իրավունքները		
	Դիտորդը	Եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի իրավունքները		
	Կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը	Եթե գտնում է, որ ստորադաս ընտրական հանձնաժողովը կամ հանձնաժողովը, որի անդամն է ինքը խախտել է իր կամ այլ անձանց որևէ ընտրական իրավունք		
Կենտրոնական ընտրական հանձնաժողովների, գործողությունները (անգործությունը)	Յուրաքանչյուր ոք	Եթե գտնում է, որ խախտվել է կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը	Վարչական դատարան	Օրացուցային 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ ողջանտունն պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին:
	Վստահված անձը	Եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի իրավունքները		
	Դիտորդը	Եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի իրավունքները		
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը	Եթե գտնում է, որ ստորադաս ընտրական հանձնաժողովը կամ ԿԸՀ-ը խախտել է իր կամ այլ անձանց որևէ ընտրական իրավունք		


Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
Թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու դիմում	Միայն թեկնածուն	Եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, ըստ որոնց՝ 1. թեկնածուն չունի ընտրվելու իրավունք, կամ 2. գրանցման համար ներկայացված փաստաթղթերը կերձված են	Թեկնածուին գրանցած հանձնաժողով	
Թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու դիմում	Միայն թեկնածուն կամ թեկնածուին գրանցած հանձնաժողովը	1) Եթե ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով (տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում, բացառությամբ Երևանի ավագանու ընտրությունների, թեկնածուին գրանցած համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով)	քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
		2) դատարանի վճռի հիման վրա, եթե նա խախտել է օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասի կամ օրենսգրքի 26-րդ հոդվածի դրույթները	ՀՀ վարչական դատարան	մինչև քվեարկության օրը

Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու դիմում	Ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	Եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով 1) կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հետևանքով ընտրական ցուցակի թեկնածուների թիվը նվազում է 25-ից. 2) կուսակցության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու դիմում	Ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	Գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե 1) ներկայացվել է դիմում ինքնաբացարկի մասին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ սինչն ժամը 18.00-ն
		2) կուսակցությունը լուծարվել է. 3) կուսակցության գործունեությունը կասեցվել կամ արգելվել է. 4) կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների թիվը նվազել է երկուսից:	<< վարչական դատարան	սինչն քվեարկության օրը

Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու որոշումը	Ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	5) դատարանի վճռի հիման վրա, եթե խախտվել են օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասի կամ օրենսգրքի 26-րդ հոդվածի դրույթները: Եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝ 1) նա չունի ընտրվելու իրավունք: 2) նրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու որոշումը	Ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	Եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
Թեկնածուի գրանցման վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը	Թեկնածուն	Եթե առկա են գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքեր	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	Օրացուցային 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ որջանտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը

Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
Թեկնածուի գրանցման վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը	Թեկնածուն կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	Եթե առկա են թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքեր		Օրացուցային 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմորդն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը:
Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու մասին դիմում	Թեկնածուն	Եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	Քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն:
	Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	Եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր		
	Վստահված անձը	Եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում և միայն իր վստահորդի ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ		

Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
	Համապատասխան տեղանային ընտրական հանձնաժողովի անդամը	Եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին		
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը	Եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր		
Ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում	Թեկնածուն	Եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր	Համապատասխան ընտրության արդյունքներն անվավեր սահմանված ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 2 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն:	
	Համամասնական ընտրական ընտրության արդյունքներին մասնակցող կուսակցություններ (կուսակցությունների դաշինքը)	Եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր		



This guidebook is made possible by the support of the United States Agency for International Development (USAID) under the terms of Cooperative Agreement AID-111-A-09-00002 with IFES-Armenia and with the expert assistance of the Central Electoral Commission of the Republic of Armenia. The contents of this publication are the sole responsibility of the authors and do not necessarily reflect the views of USAID or the U.S. Government.

Սույն ուղեցույցը հրատարակվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) շնորհիվ՝ թիվ AID-111-A-09-00002 համագործակցության ժամանակաշրջանի իրման վրա՝ ԱՅ ԷՖ Ի ԷՍ Հայաստանյան մասնաճյուղի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական համաձայնագրի վերաբերյալ փորձագիտական աջակցությամբ: Սույն ձեռնարկի բովանդակության ղախախտման հետևանքներն են, ղախադիւր չէ, որ այն համընկնի ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին: